ՀՀ ԿԳՄՍՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ **ԳՐԵՏԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ** 2023 Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Նշված ժամանակահատվածում կազմակերպել եմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի, նախարարի տեղակալների, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, ինչպես նաև նախարարության վարչությունների պետերի մասնակցությամբ միջոցառումների անցկացման ընթացակարգային գործընթացը և ապահովել եմ կազմակերպչական կանոնները:

Հունվարից մարտ ընկած ժամանակահատվածում իմ մասնակցությամբ կազմակերպվել է 53 ներքին արարողակարգային միջոցառումներ, որոնք տեղի են ունեցել ինչպես ԿԳՄՍ նախարարությունում, այնպես էլ նախարարությունից դուրս:

Սահմանվել են ներքին արարողակարգային միասնական կանոններ՝ ապահովելով միասնական արարողակարգային գործելակերպ և ընթացակարգ, ինչպես նաև հաշվի առնելով միջոցառման բնույթը: Ըստ այդմ՝ միջոցառումներն ունեցել են հետևյալ ուղղվածությունը և բնույթը.

1. Նախարարի, նախարարի տեղակալների, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, նախարարության վարչությունների պետերի մասնակցությամբ տեղի ունեցող միջոցառումներ, որոնց կազմակերպման պատասխանատուն նախարարությունն է:

2. Նախարարի, նախարարի տեղակալների, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, ինչպես նաև Նախարարության վարչությունների պետերի մասնակցությամբ տեղի ունեցող միջոցառումներ, որոնց կազմակերպման անմիջական պատասխանատուն նախարարությունը չէ, բայց դրանք իրականացվում են Նախարարության աջակցությամբ:

3. Նախարարի, նախարարի տեղակալների, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, ինչպես նաև նախարարության վարչությունների պետերի մասնակցությամբ տեղի ունեցող միջոցառումներ, որոնց նրանք ներկա են որպես հրավիրյալներ:

Նախարարության պաշտոնական կայքէջի (escs.am) և «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում նախարարության պաշտոնական էջի համար պատրաստել եմ նախարարի, նախարարի տեղակալների, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, նախարարության վարչությունների պետերի մասնակցությամբ 78 տեղեկատվական բնույթի նյութ, որոնք նաև տարածվել են ԶԼՄ-ներով:

Պատասխանել եմ լրատվամիջոցների ներկայացուցիչների՝ ԿԳՄՍ նախարարության ոլորտներին առնչվող 2 հարցման:

Մասնակցել եմ նաև Կանանց միջազգային օրվա կապակցությամբ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Հայաստանում առաջին անգամ անցկացվող «PIAF SYMPHONIQUE» նախագծի կազմակերպչական-արարողակարգային աշխատանքներին:

Բացի դրանից՝ մասնակցել եմ նախարարության տեղեկատվական քաղաքականության իրականացման աշխատանքներին, նոր ծրագրերի, նախագծերի վերաբերյալ ներկայացրել առաջարկություններ, ըստ անհրաժեշտության՝ կատարել նյութերի սրբագրման և այլ ընթացիկ աշխատանքներ:

ՀՀ ԿԳՄՍՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության փորձագետ Գրետա Գրիգորյան